Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Wordwall առցանց կրթական գործիքի կիրառումը բառապաշարի յուրացման գործընթացում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անժելա Մարգարյան Նորահայրի անգլերենի ուսուցիչ +37498813531 angelamargaryan7@gmail.com անգլերեն 3,4,5,6,7,8,9,10-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Կոտայքի մարզ, գյուղ Մայակովսկի, 9-րդ փողոց, 2-րդ փակուղի, 2/4, (0222) 60145 mayakovski@schools.am

Բովանդակություն

Ներածություն **3**

Հիմնական բովանդակություն **7**

Եզրակացություններ, առաջարկություններ **14**

Օգտագործված գրականության ցանկ
16

Հավելվածներ
17

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Լեզուն բանավոր և գրավոր հաղորդակցման միջոց է: Այն յուրացնելու և կիրառելու համար տվյալ լեզվի բառապաշարը առաջնային է, եթե ոչ գլխավոր: Դա սոսկ բառերի խումբ չէ: Այն իր մեջ ներառում է տվյալ լեզուն կրողների մտածողությունը, հոգևոր արժեքները, մշակույթը և աշխարհայացքը:Լեզվի բառապաշարի մեջ մտնում են ինչպես համագործածական (ընդհանուր գործածածական) բառերն ու դարձվածքները, այլ նաև լայն գործածություն չունեցող տերմինները, այլ կերպ ասած՝ լեզվի բառապաշարն ընդգրկում է ինչպես գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) բառախմբերը, այնպես էլ տերմինաբանությունը: Բառապաշարի առավել գործուն, կենսունակ շերտը կոչվում է բառային հիմնական ֆոնդ (հիմնական բառաֆոնդ): Բառապաշարը լինում է ակտիվ և պասիվ: Ակտիվ բառապաշարը ներառում է այն բառերը , որոնք օգտագործվում են տվյալ մարդու կողմից իր առօրյա կյանքում իր ա ռօրյա պահանջմունքները բավարարելու համար: Իսկ պասիվ բառապաշարը կազմում են այն բառերը , որոնք մենք հասկանում ենք , երբ լսում ու կարդում ենք , բայց չենք կիրառում: Սա վերաբերում է ինչպես մայրենի լեզվին , այնպես էլ օտար լեզվին: Սովորողների մոտ լեզուն յուրացնելիս ձևավորվում են բազմաթիվ բառեր , որոնք նրանք պարբերաբար օգտագործում են թե՛ գրելիս , թե՛ կարդալիս: Այսպիսի բառերը կազմում են նրանց ակտիվ բառապաշարը: Իսկ այն բառերը , որոնք լսում են հեռուստացույցով , կամ կարդալիս , կամ այլ միջավայրում,

	բայց չեն կիրառում, համարվում է պասիվ բառապաշար: Լեզուն յուրացնելու գործընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և՛ ակտիվ, և՛ պասիվ բառապաշարի զարգացմանը, քանի որ ինչպես նշեցինք երկուսն էլ նշանակալի դեր ունեն հաղորդակցության համար և անհրաժեշտ է ճիշտ մեթոդներ ընտրել բառապաշարի տարբեր շերտերի զարգացման և հարստացման համար:: Սա է պատճառը, որ յուրաքանչյուրիս մոտ ցանկացած լեզվի բառապաշարի հարստացման գործընթացը անվերջ է, իսկ բառապաշարի ձևավորման ու հարստացման ուղիներ՝ բազմազան: Անշուշտ այդ բազմազանության մեջ գլխավորը ընթերցանությունն է, որ շատերի համար դառնալով նախասիրություն ապահովում է բառապաշարի հարստացում ամբողջ կյանքի ընթացքում՝ զուգակցելով հաճելին օգտակարի հետ: Սակայն մեր օրերում սովորողների շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ նվազել է՝ տեղը զիջելով վիդեո և համացանցային տարբեր խաղերին: Եվ ինչքան էլ, որ ցանկանանք սովորողների մոտ սեր առաջացնենք ընթերցանության հանդեպ, միևնույն է առցանց խաղերը խլում են սովորողների ազատ ժամանակի մեծ մասը:Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել գտնել և կիրառել այնպիսի գործիքներ, որոնք սովորողների հետաքրքրության շրջանակներում են և նպաստում են խոսքային ամենակարևոր միավորի՝ բառապաշարի ձևավորմանը: Ուստի այս հետազոտության նպատակն է պարզել , թե որքանով են առցանց կրթական գործիքները և առցանց խաղերը նպաստում բառապաշարի յուրացմանն ու հարստացմանը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին • Լեզվական գրագիտություն և կարողունակություն • Սովորել սովորելու կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի 23 աշակերտ՝ 9 տղա, 14աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունը հիմնականում իրականացրել եմ փաստաթղթերի/ հայտորոշիչ թեստեր, դիտարկման քարտեր / տե՛ս հավելվածներում/, տնային և դասարանական աշխատանքների տետրեր, բանավոր հարցումների համար ստեղծված դիտարկման քարտեր/ հավաքագրման և վերլուծության միջոցով ,որն էլ հնարավորություն տվեց համադրել հետազոտության սկզբի արդյունքները հետազոտության վերջում հավաքված փստացի արդյունքների հետ: Հետազոտության ընթացքում իրականացրել եմ նաև դիտարկումներ որոշ աշակերտների մասով , քանի որ հետազոտությունը կարճաժամկետ էր: Ընտրել եմ մի քանի աշակերտների, ովքեր դժվարանում են մտապահել նոր բառերը և բառակապակցությունները և ում համար

	ձանձրալի է դասագրքերով կամ տեքստերով աշխատանքը:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	19.08- 20.09 2023թ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը, քանի որ «օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով»: Բառապաշարը պատմական կարգ է: Այն անընդհատ փոփոխվում է լեզվի զարգացմանը զուգահեռ, լրացվում է ու կատարելագործվում: Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենինց շատ բառապաշարն է կրում արտալեզվական գործոնների ազդեցությունը: Հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները շատ արագ իրենց արտահայտությունն են գտնում բառապաշարի մեջ: Վերջինիս փոփոխումն ու լրացումն անմիջականորեն կապված է արտադրական գործունեության, հասարակական-տնտեսական կյանքի, մշակույթի, գիտության և տեխնիկայի զարգացման հետ: Նոր առարկաների ու երևույթների ի հայտ գալուն զուգահեռ լեզվուն համալրվում է նոր բառերով, որոնք կարող են լինել ինչպես լեզվում արդեն առկա բառերից բառաբարդման ու ածանցման միջոցով կերտված, այնպես էլ այլ լեզուներից փոխառված: Մյուս կողմից որոշակի առարկաների ու երևույթների՝ գործածությունից դուրս գալու հետևանքով լեզվից դուրս են մնում նաև դրանց անվանումները: Բառապաշարի փոփոխմանն ու լրացմանը մեծապես նպաստում են նաև տեղի ունեցող իմաստաբանական բարդ գործընթացները: Բառային կազմի լրացման աղբյուր կամ բառապաշարից

բառի դուրս մղման պատճառ կարող են դառնալ նաև բառերի մեջ նոր իմաստի կամ իմաստների առաջացումը, բառի իմաստի մթագնումը և այլն:
Այսպիսով, բառապաշարում տեղի ունեցող տեղաշարժերն արտահայտվում են նորաբանություններով՝ նոր բառերի կազմությամբ, նորագույն փոխառու լեզվի տարբեր ոլորտներում արդեն գործածական բառերի վերաիմաստավորման, հների մոռացման և այլ իրողությունների շնորհիվ:

Բառապաշարը խոսքի ուղնուծուծն է, նրա սնունդը, էությունը, շինանյութը: Ուստի առանց բառապաշարի, խոսքի մյուս բաղադրիչները ուղղակի չեն կարող աշխատել: Հետևաբար, հարկ է ,որ բառապաշարը հարստացվի կյանքի յուրաքանչյուր փուլում հնարավոր բոլոր միջոցներով:

Լեզվի յուրացման և ընկալման մեջ նախ և առաջ կարևոր դեր ունի բառապաշարը: Միջազգայնորեն ճանաչված ակադեմիկոս, լեզվի ուսուցիչ և անգլերենի ուսուցման վերապատրաստող Սքոթ Սոմբերին իր աշխատություններից մեկում գրում է. «Դուք ավելի մեծ առաջընթաց կտեսնեք, եթե սովորեցնեք ավելի շատ բառեր և արտահայտություններ: Ծատ քիչ բան կարող եք ասել քերականության միջոցով, բայց գրեթե ամեն բան՝ բառերով»:

Բառապաշարի հարստացումը խոսքի զարգացման ամենակարևոր պահանջն է: Բառերն արտահայտում են խոսքի բովանդակությունը՝ առարկաներ, երևույթներ, դրանց հատկությունները, որակը և գործողությունները: Երեխաներն առաջին հերթին ընկալում են այն բառերը, որոնք առավել կարևոր են հետագայում շրջակա աշխարհի հետ շփման համար: Բառապաշարի զարգացման համար շատ կարևոր է բառերի իմաստների ընկալումը ոչ

միայն պարապմունքների ժամանակ, այլ նաև առօրյայում:

Վաղ տարիքում երեխան աշխարհը ճանաչում է խաղերի միջոցով: Ինչպես Վ. Ա. Սուխոմլինսկին է ասել. <<Առանց խաղի չկա և չի կարող լինել երեխայի մտավոր զարգացում: Խաղը մի հսկայական լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգեկան աշխարհ է թափանցում կենդանի հասկացությունների,պատկերացումների համախումբ: Խաղը ջանասիրություն և հետաքրքրություն բոցավառող կայծ է>>: Հայ մեծ բանաստեղծ Թումանյանը գրել է. <<Խաղը մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղալով է մոտենում, դա նրա ձևն է, դա նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու>>:

Ժամանակի հետ խաղը ձևափոխվում , բարդանում է , բայց չի անհետանում մարդու կյանքից:

<< Խաղը չպետք է անհետանա երեխայի կյանքից: Այն պետք է շարունակի իր տեղն ունենալ թե՛ դպրոցական ուսուցման, թե՛ աշխատանքային գործընթացում>> ասել է Լ.Ս.Վիգոտսկին:

Ա. Ն. Լեոնտևն է ասել <<Խաղը երևակայության մեջ անձի ազատության, անկրկնելի հետաքրքրությունների տարածքային իրագործումն է>>:

Խաղային հնարքներով ուսուցումը լայն տարածում է գտել 2003թ.-ից ի վեր, երբ առաջին անգամ Ջեյմս Ջին խոսեց ճանաչողական զարգացման համար խաղի կարևորության և ազդեցության մասին:Այդ ժամանակից խաղային

	հնարքներով ուսուցման միտում առաջացավ:Այն կարևոր է , քանի որ նման ուսուցման ժամանակ դասը դառնում է օգտակար և հաճելի:
Հետազոտության ընթացքը	Հետազոտության առաջին երկու դասերին հավաքել եմ փաստեր հինգերորդ դասարանի աշակերտների <<Նախասիրություններ>> թեմայից ունեցած գիտելիքների վերաբերյալ՝ հիմնականում կենտրոնանալով բառապաշարի վրա: Առաջին դասին սովորողներին բաժանվել են հայտորոշիչ թեստեր/ տե՛ս հավելվածներում/ , որով ստուգել եմ թեմայի վերաբերյալ նրանց ընթերցելու և գրելու կարողությունները: Միաժամանակ զրուցել եմ սովորողների հետ իրենց նախասիրություններից և առաջարկել եմ նրանց թղթերի վրա գրել իրենց առաջարկությունները անգլերենի դասաժամերի անցկացման վերաբերյալ: Երկրորդ դասը սովորողների հետ անցկացրել եմ հարց ու պատասխանի ձևով,նրանց ունկնդրելու և բանավոր խոսելու կարողությունները դիտարկելու համար : Հիմնականում աշխատել եմ դասագրքով : Սովորողներին նաև հնարավորություն է տրվել ընտրել զույգեր և զույգերով ներկայացնել դերախաղ - հարցազրույց: Որոշ աշակերտների համար լրացվել են նաև դիտարկման քարտեր: Քանի որ աշակերտներին հանդիպում եմ շաբաթական միայն երեք անգամ , նման քարտերը հնարավորություն տվեցին համեմատել արդյունքները և անել ավելի ճիշտ եզրահանգումներ: Երրորդ դասի համար թեմայի արտահայտություններով և նոր բառերը ներկայացվեցին պատկերներով jamboard և

	, սովորողները փորձեցին կռահել , թե ինչպես են այդ արտահայտությունները հնչում անգլերենով, այնուհետև լսեցին դրանց արտասանությունը, մի քանի աշակերտներ կրկնեցին դրանք բարձրաձայն, որից հետո սովորողները այդ արտահայտությունները անցկացրեցին իրենց բառատետրերում , այնուհետև խմբերով կազմեցին նախադասություններ: Դասի վերջում նրանց առաջարկվեց խաղալ << Անագրամա>> խաղը, որը կազմված էր հենց այդ նույն բառերից : Խաղը նույնպես անցկացվեց խմբերով , սակայն այս անգամ օգտագործվեց Wordwall առցանց հարթակը: Պրոյեկտորի օգնությամբ բառը ներկայացվում էր խմբերին, նրանց տրվում էր որոշակի ժամանակահատված, որի ընթացքում նրանք պետք է կռահեին բառը և թղթի վրա /վանդակների մեջ/ գրած ներկայացնեին այն: Խումբը , որը ճիշտ էր կռահում բառը, իրավունք էր ստանում առցանց հավաքել այն և անցնել հաջորդին: Անագրամա: Նույն խաղը հանձնարարվեց նաև որպես տնային աշխատանք: Չորրորդ դասի համար , քանի որ դասի հիմնական նպատակն էր զարգացնել սովորողների ընթերցելու և տեքստը ընկալելու կարողությունները, նույն հարթակում ստեղծեցի երկու խաղը՝ <<Համապատասխանեցում>>match up և << Լրացնել բաց թողնված բառը>>gap filling: Դասի առաջին հատվածում սովորողների մոտ նախորդ դասերին ձեռք բերվածը վերհիշելուց և դասին մոտիվացնելուց հետո սովորողներին առաջարկվեց խաղալ առաջին խաղը: Խաղի արդյունքները ամփոփելուց հետո, դասարանը բաժանվեց զույգերի և նրանց ներկայացվեց երրորդ խաղը: Այնուհետև զույգերին բաշխեցի խաղի թղթային տարբերակը և ժամանակ հատկացրեցի ,

	որպեսզի աշխատեն վրան: Հաջորդիվ, զույգերին միավորեցի խմբերի մեջ, նորից ժամանակ հատկացրեցի , որ կարողանան համեմատել իրենց աշխատանքները: Այս աշխատանքին հատկացված ժամանակի ավարտվելուց հետո, խմբերին բաժանվեց հեռախոսներ, և սովորողները հնարավորություն ստացան առցանց տարբերակով ներկայացնել իրենց աշխատանքը: Զույգային և խմբային աշխատանքների ընթացքում ես շրջում և կատարում էի դիտարկումներ յուրաքանչյուր սովորողի համար: Դասի վերջում սովորողներին ներկայացրեցի որոշ դիտարկումներ թույլ տրված թերությունների վերաբերյալ և երկու խաղն էլ տեղադրեցի դասարանի համար ստեղծված առցանց խմբում, որպեսզի ցանկության դեպքում կարողանան մուտք գործել և ինքնուրույն խաղալ: Հաջորդ դասը նախատեսված էր խոսելու և գրելու կարողությունները զարգացնելու համար: Ուստի, դասի սկզբում նախորդ թեմաների ֆրոնտալ կրկնողությունից հետո, ինչպես նաև թեմայի բառապաշարը ընդգրկող վերոնշյալ **Անագրամա** խաղը խաղալուց հետո, սովորողներին առաջարկվեց խաղալ Random wheel, որն ինձ հնարավորություն տվեց դիտարկել, թե որքանով է սովորողների խոսքը վերոնշյալ թեմայի շրջանակներում հղկվել, իսկ բառապաշարը՝ հարստացել: Գրավոր խոսքում յուրացված բառապաշարի մակարդակը որոշելու համար, սովորողներին առաջարկվեց գրել կարճ / 3-4 նախադասություն/ շարադրանք իր և իր դպրոցական ընկերոջ նախասիրությունների մասին, որից առաջ սակայն սովորողները հարցազրույց էին վերցնում իրենց ընկերներից: Հետազոտության ընթացքում սովորողները աշխատել են նաև իրենց դասագրքերով,

	ստեղծված խաղերի բովանդակության մեծ մասը նույնպես վերցված էր հինգերորդ դասարանի համար նախատեսված անգլերենի դասագրքից/ Մարի հրատարակչություն/ : Սա արված էր մի նպատակով, որ սովորողների համար ապահովեր <<Narrow reading>> ռազմավարությունը: Այն նախատեսում է, որ սովորողները բավականին երկար ժամանակ կարդում են միևնույն թեմային առնչվող և միևնույն բառապաշարը պարունակող տարբեր տեքստեր: Այս պարագայում տեքստերի փոխարեն խաղեր են, որոնք ստեղծված են նույն հարթակում, նույն դասագրքային բառապաշարով և սովորողները հնարավորություն ունեն, երբեմն պարտադրված են խաղերում ընդգրկված բառերը և արտահայտությունները մի քանի անգամ կարդալ: Հետազոտության ավարտին սովորողները իրենց կարծիքը արտահայտեցին այս եղանակով կազմակերպվող դասերի, առցանց հարթակում ստեղծված խաղերի վերաբերյալ, ինչպես նաև արեցին առաջարկություններ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Առցանց հարթակը բավականին գրավիչ էր սովորողների համար: Նրանք հետաքրքրված էին դասապրոցեսով, անհրաժեշտություն չկար լրացուցիչ մեթոդներով գրավել նրանց ուշադրությունը: Եթե սովորական դասապրոցեսին սովորողների մի խումբ դժկամությամբ էր մասնակցում առաջադրանքներին, ապա այս պարագայում, նրանք պատրաստակամությամբ և սիրով էին մասնակցում խաղերին և ուշադիր էին դասի բոլոր փուլերի ընթացքում: Նույն պատրաստակամությունը և նախաձեռնությունը երևում էր նաև տնային հանձնարարությունների կատարման ժամանակ: Եթե թեմայի սկզբում աշակերտների բառապաշարը ընդգրկում էր չորսից -հինգ բառ կամ արտահայտություն, ապա թեմայի ընթացքում հատկապես խաղերից հետո յուրացված բառերի քանակը ավելացավ, որը նպաստեց ունկնդրման հմտությունների զարգացմանը, անծանոթ տեքստի հետ աշխատելու հմտությունների զարգացմանը:Այն նաև որոշակի կերպով նպաստեց աշակերտների գրավոր խոսքի զարգացմանը:

	 Այսպիսով, կարելի է միանշանակ պնդել, որ առցանց խաղերի ինտեգրումը օտար լեզվի դասերին նպաստում է բառապաշարի բարելավմանը՝ նպաստելով նաև խոսքային չորս հմտությունների զարգացմանը:
Այլ տեղեկատվություն	

1-2 էջ

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ Տեսություններ, մեթոդներ, գնահատում / Սիրամարգ Վարդումյան, Լիլիթ Հարությունյան, Նինա Ջաղինյան, Գարի Վարելլա/ Այրեքս , Երևան 2023**

2. **Vocabulary Games and Activities for teachers Peter Watcyn-Jones**

3 **https://www.theasianschool.net/blog/role-of-internet-in-education/** **20/08/2023**

4 Wordwall 2023-Complete Tutorial with all the updates #wordwall **20/08/2023**

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Հայտորոշիչ թեստ Observation card